

Հաստատված է

<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ

Վարչության թիվ ..... որոշմամբ

Ընդունվել է .....թ.

(ընդունման օրը՝ ուժի մեջ մտնելուց 15 օր առաջ)

Ուժի մեջ է մտել.....թ.

<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ում բանկային և/կամ այլ հաշիվների բացման և սպասարկման, վճարային քարտերի թողարկման և սպասարկման, այլ բանկային ծառայությունների մատուցման Պայմաններ

(նոր խմբագրություն)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր հասկացություններ
2. Բանկայի և/կամ այլ հաշիվների բացում և սպասարկում
  - 2.1. Հաշվի բացում.
  - 2.2. Հաշվի սպասարկում.
3. Վճարային քարտերի թողարկում և սպասարկում.
  - 3.1. Քարտի տրամադրման պայմանները և գործողության ժամկետը
  - 3.2. Քարտի օգտագործումը
  - 3.3. Քարտով իրականացվող գործառնությունների տեսակները
  - 3.4. Քարտի անվտանգության կանոնները
  - 3.5. Բանկի պարտականությունները և իրավունքները
  - 3.6. Քարտապանի պարտականությունները և իրավունքները
  - 3.7. Բանկի և Քարտապանի պատասխանատվությունը.
  - 3.8. Քարտի բլոկավորման և ապաբլոկավորման կարգը, պայմաններն ու ժամկետները
  - 3.9. Քարտի բլոկավորման և ապաբլոկավորման կարգը, պայմաններն ու ժամկետները
  - 3.10. Քարտապանի կողմից քարտային գործառնության բողոքարկման կարգն ու ժամկետները:
  - 3.11. Քարտի վերաթողարկման կարգն ու պայմանները, ժամկետները
4. Այլ բանկային ծառայությունների մատուցում.
  - 4.1. AEBINFO համակարգ
  - 4.2. "AEB HomeBank" համակարգ
  - 4.3. Cash2card.
5. Եզրափակիչ դրույթներ

## 1. Ընդհանուր հասկացություններ.

1.1. Սույն պայմաններով սահմանվում են <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ում Հաճախորդի համար բանկային և/կամ այլ հաշիվների բացման, վճարային քարտերի թողարկման և սպասարկման, այլ բանկային ծառայությունների մատուցման պայմանները:

1.2. Սույն պայմաններով սահմանված ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

**Բանկ`** <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ

**Հաճախորդ/Քարտապան`** Իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ով Բանկի հետ կնքել է բանկային հաշվի բացման և սպասարկման, վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագիր կամ դիմել է Բանկին այդ պայմանագիրը կնքելու համար:

**Պայմանագիր`** Հաճախորդի և Բանկի միջև կնքված բանկային և/կամ այլ հաշվի բացման ու սպասարկման, վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագիր:

**Հաշիվ`** Հաճախորդի համար Բանկում բացվող բանկային և/կամ այլ հաշիվ:

**Քարտ`** Բանկի կողմից Հաճախորդի համար թողարկված` տեղական (ArCa) և/կամ միջազգային (VISA, MasterCard) վճարային համակարգի վճարային քարտ:

**Պայմաններ`** Բանկի կողմից հաստատվող և հրապարակվող սույն կանոնները, որով սահմանվում են Բանկում հաշվի բացման և սպասարկման, վճարային քարտի թողարկման և սպասարկման այլ բանկային ծառայությունների մատուցման պայմանները:

**Սակագներ`** Բանկի կողմից հաստատվող և հրապարակվող կանոններ, որով սահմանվում են Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարների չափերն ու վճարման ժամկետները:

Պայմանները և Սակագները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասերը, հրապարակային և ընդհանուր են բոլոր հաճախորդների համար, հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում (<http://www.aeb.am>) և կարող են միակողմանի փոփոխվել Բանկի կողմից, որոնք ուժի մեջ են մտնում Բանկի ինտերնետային կայքում հրապարակվելուց 15 օր հետո:

**PIN կոդ`** քառանիշ համարով գաղտնի ծածկագիր, որը թողարկվում է Քարտի հետ միասին փակ ծրարով և տրվում է Հաճախորդին Քարտով գործարքներ կատարելիս Հաճախորդին նույնականացնելու նպատակով:

**Գաղտնաբառ`** Հաճախորդի կողմից Բանկին գրավոր տրվող բառերի կամ թվերի համակցություն հեռախոսակապով Հաշվի հետ կապված տեղեկատվություն Հաճախորդին տրամադրելու կամ այլ ծառայություններից օգտվելու համար վերջինիս նույնականացնելու նպատակով:

**Դիմում-Հայտ`** Բանկային հաշվի բացման և սպասարկման, Վճարային քարտի թողարկման և սպասարկման նպատակով Հաճախորդի կողմից Բանկ ներկայացվող դիմում:

**Գործարք`** Հաշվից դրամական միջոցների մուտքագրման և ելքագրման հետ կապված գործողությունները:

**Գործառնություն`** Հաշվից դրամական միջոցների մուտքագրման և ելքագրման հետ չկապված այլ գործողությունները:

**Վճարային սահմանաչափ`** Հաշվին Հաճախորդի դրական մնացորդի, ինչպես նաև Հաշվին բացված վարկային գծի հանրագումարից կատարվող վճարային գործարքի սահմանաչափ` սահմանված Բանկի կողմից:

**Կանխիկացման սահմանաչափ`** օրական կտրվածքով Հաշվից կանխիկի ստացման գործարքների հանրագումար` կամ գործարքների քանակ` սահմանված Բանկի կողմից:

**Գործարքի կատարման օր`** Հաշվով Գործարք փաստացի կատարելու օր:

**Գործարքի հաշվառման օր`** Գործարքը Հաշվով փաստացի հաշվառելու օրը:

## 2. Հաշվի բացում և սպասարկում

### 2.1. Հաշվի բացում.

2.1.1. Հաճախորդը Բանկ է ներկայացնում Պայմանների Հավելված 1-ով սահմանվող փաստաթղթերը: Փաստաթղթերի համապատասխանության դեպքում` Հաճախորդի և Բանկի միջև կնքվում է Պայմանագիրը, Հաճախորդը պարտադիր լրացնում, ստորագրում և տրամադրում է Բանկին` Պայմանների Հավելված 2-ով սահմանվող համաձայնությունը, Դիմում-Հայտը, Պայմանների Հավելված 3-ով սահմանվող ստորագրության նմուշի քարտը (իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հաճախորդների համար) և կատարում Սակագներով սահմանված հաշվի բացման վճարները: Հաճախորդը տրամադրում է նաև <<Օտարերկրյա հաշիվների հարկման համապատասխանության մասին>> ԱՄՆ օրենքի (այսուհետ` FATCA) կիրառման վերաբերյալ Բանկի սահմանած փաստաթղթերը և տեղեկությունները:

- 2.1.2. Հաճախորդը պարտավոր է տրամադրել Բանկին միայն արժանավատ և ճշմարիտ տեղեկություններ և փաստաթղթեր:
- 2.1.3. Պայմանների 2.1.1 կետով սահմանված պահանջների ապահովման դեպքում Բանկի կողմից ֆիզիկական անձ հաճախորդների հաշիվը բացվում է մեկ բանկային օրվա ընթացքում, իսկ իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հանդիսացող հաճախորդների հաշիվը բացվում է հաշվի բացման մասին տեղեկատվությունը հարկային մարմնին տրամադրելու և պատասխան հաղորդագրությունը Բանկում ստացվելուց մեկ բանկային օրվա ընթացքում:
- 2.1.4. Հաշվի բացման մասին Հաճախորդին տրվում է ծանուցում:
- 2.1.5. Բանկում կարող են բացվել ժամանակավոր, հիմնական, առարկայագուրկ մետաղական, խնայողական, համատեղ, էսքրոու և կառուցապատողի հաշիվներ:
- 2.1.6. Ժամանակավոր հաշիվը բացվում է նոր ստեղծվող իրավաբանական անձանց համար կանոնադրական կապիտալի մուտքեր կատարելու համար
- 2.1.7. Հիմնական հաշիվը բացվում է որպես հաճախորդի հիմնական բանկային հաշիվ սպասարկվելու համար:
- 2.1.8. Խնայողական հաշիվը բացվում է հաճախորդի ցպահանջ դրամական գումարներն այդ հաշվին պահպանելու դեպքում Սակագների համաձայն որոշակի տոկոսներ դրանց վրա հաշվեգրելու և վճարելու համար:
- 2.1.9. Համատեղ հաշիվը բացվում է մեկից ավելի հաճախորդների կողմից համատեղ հաշվի դրամական գումարները նրանց կողմից համատեղ կամ յուրաքանչյուրի կողմից միանձնյա տնօրինելու հնարավորությամբ:
- 2.1.10. Էսքրոու և Կառուցապատողի հաշիվները բացվում են որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված նպատակներով բացվող և սպասարկվող հատուկ հաշիվներ:
- 2.1.11. Առարկայագուրկ մետաղական հաշիվը բացվում է անկանխիկ ոսկու հաշվառման համար միայն 999.9 հարգով:

## **2.2. Հաշվի սպասարկում.**

- 2.2.1. Հիմնական հաշվով կարող են իրականացվել հետևյալ գործարքները
  - ա/ Հիմնական հաշվին մուտքագրվել Հաճախորդի անվամբ ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ ստացվող դրամական միջոցները, այդ թվում երրորդ անձանցից ստացվող,
  - բ/ Հիմնական հաշվի դրական մնացորդի սահմաններում կանխիկ դրամական միջոցների տրամադրում հաճախորդին
  - գ/ Հաճախորդի հանձնարարականներով անկանխիկ փոխանցումներ
  - դ/ Հաճախորդի տարբեր հաշիվների միջև դրամական միջոցների փոխանակումներ
  - ե/ Պայմաններով և/կամ սակագներով սահմանվող այլ գործարքներ
- 2.2.2. Հաշիվը սպասարկվում է Օրենքով, Պայմանագրով, Պայմաններով և Սակագներով սահմանվող պահանջներին համապատասխան:
- 2.2.3. Հաշվից դրամական միջոցների դուրս գրումը կատարվում է Հաճախորդի հանձնարարականի հիման վրա, Բանկի կողմից վերջինիս նույնականացնելուց հետո և Հաշվում բավարար դրամական միջոցների/դրական մնացորդի/ ու Սակագներով սահմանված վճարների գանձման հնարավորության սահմաններում, ինչպես նաև Օրենքով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում:
- 2.2.4. Բանկը կարող է մերժել Հաճախորդի հանձնարարականի կատարումը, եթե՝
  - ա/ Բանկին տրվող հանձնարարականի վավերապայմանները, գաղտնաբառերը սխալ են, թերի են, և/կամ Բանկը հնարավորություն չի ունենում նույնականացնել Հաճախորդին (նրա ներկայացուցչին):
  - բ/ Հանձնարարականում նշված գործարքները կատարելու և/կամ Սակագներով սահմանված Բանկի ծառայությունների վճարները գանձելու համար բավարար միջոցները առկա չեն Հաշվին:
  - գ/ ծագում են դրանց կատարումը խոչընդոտող անհաղթահարելի ուժի հանգամանքներ:
- 2.2.5. Հաճախորդի ներկայացուցչի լիազորությունները հավաստվում են օրենքով սահմանված կարգով Հաճախորդի կողմից տրվող լիազորագրով, ֆիզիկական անձ հաճախորդի դեպքում՝ պարտադիր նոտարական (վերջինիս հավասարեցված անձանց) վավերացումով կամ Բանկում համապատասխան պաշտոնատար անձանց հաստատումով հաճախորդի կողմից տրամադրված լիազորագրով:
- 2.2.6. Հաճախորդը(նրա ներկայացուցիչը) նույնականացվում է վերջինիս անձը հաստատող փաստաթուղթը Բանկին ներկայացվելու և նույնացվելու միջոցով, իսկ էլեկտրոնային եղանակով հաղորդակցությունների հանձնարարականների ստացման և տրման դեպքում՝ Հաճախորդի անհատական գաղտնի տվյալների (քարտի PIN կոդ, CVV և/կամ այլ տվյալներ) կիրառումով:
- 2.2.7. Մինչև Պայմանագրի կնքումը Հաճախորդի Բանկում գործող հաշիվը/ները(Քարտերը) Պայմանագրի կնքումից հետո շարունակվում են սպասարկվել Պայմանագրի պայմաններով (բացառությամբ Դիմումի ներկայացման), իսկ այդ հաշիվների(Քարտերի) նախորդ պայմանագրերը համարվում են ուժ կորցրած: Հաշվում եղած ցպահանջ դրամական միջոցների դիմաց հաշվարկվում և վճարվում են Հաճախորդին տոկոսներ Սակագներով սահմանված չափով:

- 2.2.8. Հաշվի դրամական միջոցների նկատմամբ կարող են կիրառվել սահմանափակումներ և/կամ վերացվել դրանք օրենքով սահմանված կարգով Բանկում ստացվող դատական, հարկադիր կատարման և հարկային մարմինների որոշումների հիման վրա:
- 2.2.9. Բանկի հանդեպ Հաճախորդի չկատարված պարտավորության գումարները անակցեպտ կարգով կարող են գանձվել Բանկի կողմից:
- 2.2.10. Օրենքով սահմանված Հաճախորդին պարտադիր տրամադրման ենթակա տեղեկությունները Հաճախորդին տրամադրվում են անվճար:
- 2.2.11. Հաշվով գործարքներ և այլ գործառնություններ կատարելու համար վճարները սահմանվում և անակցեպտ կարգով գանձվում են Սակագների համաձայն:
- 2.2.12. Հաճախորդի ներկայացրած անհատական տվյալների, այլ տեղեկությունների ու փաստաթղթերի, ինչպես նաև <<Օտարերկրյա հաշիվների հարկման համապատասխանության մասին>> ԱՄՆ օրենքի կիրառման համար Բանկին տրամադրված փաստաթղթերի և տեղեկությունների փոփոխության մասին Հաճախորդը պարտավոր է եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել Բանկին:

### **3. Վճարային քարտերի թողարկում և սպասարկում**

#### **3.1. Քարտի տրամադրման պայմանները և գործողության ժամկետը**

- 3.1.1. Քարտի թողարկման և հաճախորդին տրամադրման պայմանները և միջնորդավճարները սահմանում են բանկի սակագներով և դրուքաչափերով:
- 3.1.2. Քարտային հաշիվը բացվում է բացառապես Քարտով գործառնություններ իրականացնելու համար հաճախորդի դիմում-հայտի հիման վրա: Քարտային հաշիվները բացվում և վարվում են բանկի սակագներով և դրուքաչափերով սահմանված արժույթներով:
- 3.1.3. Լրացուցիչ քարտ տրամադրվում է հաճախորդի դիմում-հայտի հիման վրա, որտեղ նշվում է հաշվեհամարը, որին ցանկանում է կցել լրացուցիչ քարտը: Լրացուցիչ քարտի վրա տարածվում են քարտի համար սահմանված բոլոր պայմանները:
- 3.1.4. Քարտը տրամադրվում է Քարտապանին բլոկավորված վիճակում Երևան քաղաքի մասնաճյուղերից պատվիրելու դեպքում պատվիրման օրվանից հետո 3 բանկային օրվա ընթացքում, իսկ ՀՀ մարզերում գտնվող մասնաճյուղերից պատվիրելու դեպքում պատվիրման օրվանից հետո 5 բանկային օրվա ընթացքում սակայն ոչ շուտ քան վերջինիս կողմից Քարտի տրամադրման Դիմում-հայտի ներկայացման, Պայմանագրի և ստացականի ստորագրման, ինչպես նաև տարեկան սպասարկման վճարի մուտքագրման պահը:
- 3.1.5. Քարտը ստանալու պահին Քարտապանը պարտավոր է այն ստորագրել քարտի հակառակ կողմի ստորագրության դաշտում: Ստորագրության բացակայությունը, կամ դրա անհամապատասխանությունը հանդիսանում է օրինական հիմք Քարտի սպասարկումը մերժելու համար:
- 3.1.6. Քարտի հետ տրամադրվում է ծրար, որը պարունակում է PIN կոդը:
- 3.1.7. Քարտի ապաբլոկավորումն իրականացվում է Քարտը Քարտապանին հանձնելուց հետո՝ մեկ բանկային օրվա ընթացքում:
- 3.1.8. Քարտի գործողության ժամկետն է մինչև քարտի վրա նշված տարվա համապատասխան ամսվա վերջին օրացուցային օրը ներառյալ:
- 3.1.9. Բանկը քարտի օգտագործման յուրաքանչյուր տարվա/ամսվա համար քարտային հաշվից գանձում է տարեկան/ամսական սպասարկման վճար՝ բանկի սակագներով սահմանված չափով: Քարտի սպասարկման վարձը ժամանակին չվճարելը կարող է հիմք հանդիսանալ քարտի գործողության կասեցման համար:
- 3.1.10. Քարտի գործողությունը վաղաժամկետ դադարելու դեպքում գանձված սպասարկման վարձը չի վերադարձվում:

#### **3.2. Քարտի օգտագործումը**

- 3.2.1. Քարտով վճարում կատարելիս .
- մագնիսական ժապավենով Քարտի օգտագործմամբ POS տերմինալով կատարվող գործարքի ժամանակ հաճախորդը պարտադիր ստորագրում է POS տերմինալից տպված անդորագրի վրա(և՛ PIN-ի կիրառման , և PIN-ի կիրառման դեպքերում),
- 3.2.2. չիպային կրիչով Քարտի օգտագործմամբ POS տերմինալով կատարվող գործարքի ժամանակ, եթե կիրառվել է PIN-ը, ապա POS տերմինալից տպված անդորագրում անհրաժեշտ չէ հաճախորդի ստորագրությունը, իսկ եթե գործարքը իրականացվում է առանց PIN կոդի կիրառման՝ անդորագրում հաճախորդի ստորագրությունը պարտադիր է: Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ բանկումատում, կանխիկացման կամ առևտրային կետում Քարտի/այդ թվում՝ գործողության ժամկետը լրացած Քարտի/ չսպասարկման, կամ

դրանց աշխատանքի խափանման հետևանքով Հաճախորդին ուղղակի կամ անուղղակի հասցված վնասի համար:

- 3.2.3. Քարտի կիրառման անվտանգությունը ապահովելու նպատակով քարտապանը իր ցանկությամբ կարող է սահմանել ըստ գործարքի տեսակի և գործարքի կատարման երկրի սահմանափակումներ՝ քարտի թողարկման պահին կամ սպասարկման ընթացքում: Ընդ որում եթե հաճախորդը դիմել է կիրառել և ըստ գործարքի տեսակի և գործարքի կատարման երկրի սահմանափակումներ, ապա դրանք միաժամանակ են գործում:
- 3.2.4. Յուրաքանչյուր ամսվա համար Բանկը մինչև հաջորդ ամսվա 15-ը Քարտապանին տրամադրում է Քարտային հաշվի քաղվածք՝ Հաճախորդին շահ հաղորդակցման եղանակով: Քարտապանը պարտավոր է ստուգել քաղվածքում նշված գործարքները իրականում կատարված ծախսերի հետ, և անհամապատասխանությունների առկայության դեպքում գործարքի կատարման պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում հայտնել դրանց մասին Բանկին՝ ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ վերջինիս կողմից անհամապատասխանությունների կարգավորումն հնարավոր անվիճելի և անխոչընդոտ կարգով ապահովելու համար: Նշված ժամկետից դուրս ներկայացված պահանջների բավարարման գործընթացը Բանկի կողմից ապահովվում է իր ներքին իրավական ակտերի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:
- 3.2.5. Հաշվի մնացորդի և/կամ շարժի վերաբերյալ առարկությունների դեպքում, կամ եթե Բանկում տրվել է տրամադրել գումարը, սակայն այն դեբետագրել է քարտային հաշվից, Քարտապանը պետք է դիմի Բանկ, գործարքների բողոքարկման դիմում ստորագրելու համար: Դիմումի հիման վրա Բանկը նախաձեռնում է գործարքի բողոքարկման գործընթաց:
- 3.2.6. Կանխիկի տրամադրման օրական գործարքների առավելագույն գումարը կարող է վերանայվել Քարտապանի կողմից ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա:
- 3.2.7. Պայմանագրի դադարեցման դեպքում Հաճախորդը պարտավորություն է կրում նաև այն գործարքների հետևանքով պարտավորությունների առաջացման դեպքում վճարման համար, որոնք կատարվել են նախքան Պայմանագրի դադարեցումը:
- 3.2.8. Քարտապանը կարող է [www.arca.am](http://www.arca.am) կայքում գրանցել իր քարտը որպես վիրտուալ քարտ և իրականացնել ինտերնետային գործարքներ Հայաստանի Հանրապետության սահմաններում: Վիրտուալ քարտ գրանցելու համար անհրաժեշտ է ունենալ բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցե և գաղտնաբառ:
- 3.2.9. Սույն կանոնների խախտումով Քարտով կատարված գործառնությունների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

### 3.3. Քարտով իրականացվող գործառնությունների տեսակները

- 3.3.1. Քարտապանները վճարային քարտով կարող են իրականացնել գործառնություններ՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և (կամ) արտարժույթով բացված բանկային հաշիվներով: Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնությունները կատարվում են օրենքով, վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:
- 3.3.2. Քարտապանը քարտով կարող է իրականացնել հետևյալ գործառնությունները (ընդ որում, գործառնությունների իրականացումը կարող է սահմանափակվել՝ քարտի տեսակից և/կամ Բանկի հետ կնքված պայմանագրի պայմաններից կախված՝  
Ֆիզիկական անձ քարտապանի կողմից՝

Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս ստանալ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով կանխիկ դրամական միջոցներ,

Հայաստանի Հանրապետության տարածքում վճարել ապրանքների (աշխատանքների, ծառայությունների, մտավոր աշխատանքի արդյունքների) դիմաց Հայաստանի Հանրապետության արժույթով, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ նաև արտարժույթով,

Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով այլ գործառնություններ, եթե դրանց կատարման համար օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված չեն սահմանափակումներ:

Իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր քարտապանի կողմից՝

Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեության հետ կապված հաշվարկների, այդ թվում՝ գործառնական և վարչական ծախսերով կատարված հաշվարկների դիմաց Հայաստանի Հանրապետության արժույթով ստանալ կանխիկ դրամական միջոցներ,

Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեության հետ կապված անկանխիկ հաշվարկների, այդ թվում՝ գործառնական և վարչական ծախսերով կատարված հաշվարկների դիմաց վճարել Հայաստանի Հանրապետության արժույթով,

Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով այլ գործառնություններ, եթե դրանց կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանափակումներ նախատեսված չեն:

3.3.3. Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով կատարված Գործարքները հաշվարկվում են Գործարքի օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված առքի կամ վաճառքի փոխարժեքով, որի հետ կապված արժույթների փոխարժեքների տարբերությունից առաջացած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

#### 3.4. Քարտի անվտանգության կանոնները

3.4.1. Քարտը ստանալիս Քարտապանը պետք է անմիջապես գրիչով ստորագրի քարտի հակառակ կողմում ստորագրության համար նախատեսված հատուկ դաշտում: Ստորագրության բացակայության կամ անհամապատասխանության դեպքում քարտի սպասարկումը կարող է մերժվել, Քարտապանի համար կարող են առաջանալ լրացուցիչ ծախսեր, ինչպես նաև մեծանում է քարտով զեղծարարական գործառնությունների կատարման հավանականությունը:

3.4.2. Քարտը պետք է պահպանվի ապահով տեղում, ուր այն անհասանելի կլինի այլ անձանց, հեռու խոնավությունից, բարձր ու ցածր ջերմաստիճաններից և ուժեղ մագնիսական դաշտերից: Պետք է խուսափել քարտի մեխանիկական վնասվածքներից և չափից դուրս ճկնվելուց:

3.4.3. Ոչ մի դեպքում չպետք է գրել PIN կոդը քարտի վրա կամ հայտնել այն այլ անձանց՝ այդ թվում բանկի աշխատակիցներին: Հիշեցեք, որ PIN-ը հայտնի է միայն Քարտապանին և ոչ ոք, այդ թվում բանկի աշխատակիցները, այն չգիտեն:

3.4.4. Ծրարի PIN-ը պարունակող հատվածը ցանկալի է բացելուց և PIN-ը մտապահելուց հետո անմիջապես ոչնչացնել: Անհրաժեշտության դեպքում PIN-ը պետք է գրվի այնպիսի տեղում, որ այլ անձիք չկարողանան կռահել դրա նշանակությունը և պահվի քարտից առանձին:

3.4.5. PIN-ը 3 անգամ սխալ հավաքելուց հետո քարտն ավտոմատ կերպով կբլոկավորվի և քարտից օգտվելը կդադարանա անհնարին՝ առանց Բանկի կողմից ապաբլոկավորելու: Ընդ որում, քարտը, որպես կանոն, կառգրավվի բանկումատի կամ սպասարկող կետի աշխատակցի կողմից:

3.4.6. Քարտապանը քարտը կամ PIN-ը ոչ մի դեպքում չպետք է փոխանցի այլ անձանց:

3.4.7. Քարտի կորստի դեպքում Քարտապանը պետք է անմիջապես տեղեկացնի այդ մասին Բանկի համապատասխան ծառայություններին՝ զանգահարելով +374 (10) 59-22-22 կամ +374 (10) 53-07-61 հեռախոսահամարներով: Բանավոր հայտարարությունը Քարտապանի կողմից պետք է հնարավորինս արագ գրավոր ձևով հաստատվի, որտեղ մանրամասն պետք է նշվեն քարտի կորստի կամ գողացման հանգամանքները, ժամանակը, վայրը, Քարտապանի հետ կապվելու հնարավորություն տվող տվյալները, ինչպես նաև քարտի անօրինական օգտագործման մասին տեղեկություններ՝ այդպիսիքի առկայության դեպքում:

3.4.8. Խորհուրդ է տրվում քարտի գողության փաստի վերաբերյալ անմիջապես տեղյակ պահել այն երկրի ոստիկանությանը, որտեղ կատարվել է գողությունը: Դիմումի (արձանագրության) պատճեն անհրաժեշտ է ներկայացնել Բանկ:

3.4.9. Քարտապանը պետք է պահպանի կատարված գործարքների գծով բոլոր անդորագրերը (այդ թվում՝ բանկումատների) և համեմատի այն իր հաշվի ամենամսյա քաղվածքի հետ: Քաղվածքում առկա որևէ սխալ կամ իր կողմից չկատարված գործառնությունների մասին Քարտապանը պետք է անմիջապես տեղեկացնի Բանկին, այլապես բողոքարկման համար սահմանված ժամկետի ավարտից հետո Բանկը, չի կարող բավարարել Քարտապանի բողոքը:

3.4.10. Եթե քաղվածքում պարունակվում են ելքային գործառնություններ այն երկրների նշումով, որտեղ Քարտապանը տվյալ ժամանակահատվածում չի գտնվել (բացի հեռախոսային, փոստային և Internet գործառնություններից, որոնց գծով Քարտապանը կասկածներ չունի), ապա Քարտապանը պետք է անմիջապես այդ մասին տեղեկացնի Բանկին և բլոկավորի իր քարտը:

3.4.11. Ցանկալի է օգտվել այնպիսի բանկումատից, որը գտնվում է լավ լուսավորված և մարդաշատ վայրում: Բանկումատից օգտվելուց առաջ անհրաժեշտ է նայել շուրջբոլորը և կասկածելի երևույթ նկատելու դեպքում հետաձգել գործարքը կամ օգտվել այլ բանկումատից: Անհրաժեշտության դեպքում ցանկալի է, որ Քարտապանին ուղեկցեն վստահելի անձիք, հատկապես գիշերը:

3.4.12. Նախքան բանկումատին մոտենալը, պետք է նախապես պատրաստի պահել քարտը: Չպետք է որոնել այն դրամապանակում կամ պայուսակում ուղղակի բանկումատի առջև:

3.4.13. Գաղտնաբառը պետք է հավաքել այնպես, որ այլ անձանց այն տեսանելի չլինի կամ չտեսագրվի տեսախցիկի կողմից:

3.4.14. Չպետք է մոռանալ բանկումատից վերցնել կանխիկ գումարը, քարտը և անդորագիրը:

- 3.4.15. Եթե ժամանակին չվերցնել բանկոմատի կողմից տրամադրված գումարը կամ քարտը, ապա մոտավորապես 30 վայրկյան հետո դրանք կառգրավվեն բանկոմատի կողմից: Առգրավված քարտի վերադարձման քաղաքականություն ունեն ոչ բոլոր բանկերը, իսկ եթե Քարտապանը չդիմի տվյալ բանկոմատը սպասարկող բանկին 1 օրվա ընթացքում, ապա քարտը, ամենայն հավանականությամբ, կոչնչացվի: Քարտը ստանալուց հետո անհրաժեշտ է անպայման դիմել Բանկին և ստուգել քարտի կարգավիճակը՝ համոզվելու համար, որ այն բլոկավորված չէ:
- 3.4.16. Եթե կանխիկի դուրսբերման ընթացքում բանկոմատը չի վերադարձրել քարտը և չի տվել առգրավման մասին համապատասխան հաղորդագրություն էկրանին կամ անդորագրի վրա, ապա անհրաժեշտ է անմիջապես զանգահարել Բանկ և համոզվել, որ քարտը բլոկավորվել է: Այլապես, անհրաժեշտ է այն անպայման բլոկավորել:
- 3.4.17. Գործարքի ընթացքում որևէ կասկածելի անձ կամ երևույթ նկատելու դեպքում անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել գործարքը՝ սեղմելով բանկոմատի համապատասխան ստեղնը, վերցնել քարտը և հեռանալ: Չպետք է կատարել պատահական անձանց խորհուրդները, թողնել նրանց Քարտապանի փոխարեն իրականացնել գործարքը, հավաքել PIN-ը և այլն:
- 3.4.18. Գումարը ստանալուց հետո հետապնդում նկատելիս անհրաժեշտ է ընթանալ դեպի մարդաշատ, լավ լուսավորված վայր: Անհրաժեշտության դեպքում, պետք է դիմել ոստիկանություն:
- 3.4.19. Փակ տարածքում գտնվող բանկոմատից օգտվելիս չպետք է թույլատրել անհայտ անձանց մուտքը: Նշված տարածքում գտնվող բանկոմատ մուտքը թույլատրող քարտ-ընթերցող սարքերը չպետք է PIN-ի մուտքագրում պահանջեն: Նշված սարքում պատահաբար PIN մուտքագրելու դեպքում անհրաժեշտ է անմիջապես բլոկավորել քարտը և դիմել Բանկ:
- 3.4.20. Ոչ մի դեպքում չպետք է օգտվել այն բանկոմատներից, որոնց քարտ-ընթերցող սարքին, ստեղնաշարին կամ կանխիկի տրամադրման պատուհանին միացված են լրացուցիչ սարքավորումներ, հաղորդակարեր, կաշուն ժապավեններ և այլն:
- 3.4.21. Քարտով գնումներ պետք է կատարել միայն վստահելի առևտրի կետերից: Գնումներ չպետք է կատարել այնպիսի առևտրի կետերից, որոնք կասկածելի են թվում:
- 3.4.22. Երբեք չպետք հայտնել քարտի տվյալները (քարտի համարը, գործողության ժամկետը և այլն) պատահական անձանց և ոչ մի դեպքում չպետք է ուղարկել դրանք էլ-փոստով: Էլեկտրոնային փոստով ուղարկվող տեղեկատվությունը, որպես կանոն, չի գաղտնագրվում:
- 3.4.23. Առևտրի կետերում քարտը պետք է ներկայացնել կամ քարտի տվյալները հայտնել միայն զանձապահին և միայն այն դեպքում, երբ իսկապես պատրաստվում եք գնում կատարել:
- 3.4.24. Գործարքի իրականացման ժամանակ չպետք է քարտը բաց թողնել տեսադաշտից: Չպետք է թույլատրել զանձապահին կամ այլ աշխատակցի քարտը դուրս բերել սպասարկման տարածքից:
- 3.4.25. Առևտրի և սպասարկման կետերում էլեկտրոնային տերմինալի միջոցով կատարվող սպասարկման ժամանակ տպվում է անդորագրի 2 օրինակ, որոնցից մեկը Քարտապանը պարտադիր ստորագրում է անդորագրի վրա այն դեպքում, երբ գործարքը կատարվել է մագնիսական ժապավենով Քարտի ընթերցմամբ (և՛ PIN կոդի կիրառման դեպքում, և՛ PIN կոդի չկիրառման դեպքում), ինչպես նաև չիպային կրիչով Քարտի ընթերցմամբ՝ առանց PIN կոդի կիրառման կատարվող գործարքների: Որոշ կետերում գործարքները կատարվում են մեխանիկական պատճենադաշտի միջոցով և անհրաժեշտ տվյալները ձեռագիր լրացվում են տվյալ կետի զանձապահի կողմից: Այս դեպքում փաստաթուղթը կազմվում է 3 օրինակից: Ստորագրելուց առաջ անհրաժեշտ է համոզվել, որ կատարված գնման, ստացված ծառայության կամ կանխիկի գումարի արժեքը համապատասխանում է չեկի վրա նշվածին: Երբեք չպետք է ստորագրել այն փաստաթղթի վրա, որի գումարային մասը լրացված չէ:
- 3.4.26. Քարտապանը անպայման պետք է վերցնի անդորագրի իր օրինակը և պահպանի նվազագույնը մինչև տվյալ գործառնության բողոքարկման համար սահմանված ժամկետի ավարտը:
- 3.4.27. Քարտապանը պետք է պահանջի իր ներկայությամբ անմիջապես ոչնչացնել սխալ ձևակերպված կամ իր կողմից հրաժարված գործարքի վերաբերյալ փաստաթղթի վաճառողի օրինակը, իսկ հաճախորդի օրինակը վերցնի իր հետ: Դա թույլ կտա ավելի արագ ապաստանեցնել հրաժարված գործարքի գծով Քարտատիրոջ միջոցները, իսկ վաճառողի կողմից խաբեության դեպքում բողոքարկել գործառնությունը հնարավորինս կարճ ժամկետում:
- 3.4.28. Քարտով վճարված ապրանքի վերադարձի դեպքում վաճառքի կետից պետք է պահանջել և պահպանել համապատասխան փաստաթուղթ, որը պետք է պարունակի չեղյալացված գործարքի տվյալները (քարտի համարը, նախնական գործառնության ամսաթիվը, հավաստագրման կողը, վերադարձվող գումարը):
- 3.4.29. Ոչ մի Internet առևտրի կետ չպետք է PIN պահանջի, այլապես դա խաբեություն է: Ոչ մի դեպքում չպետք է հայտնել PIN-ը և պետք է անմիջապես դադարեցրել գործառնությունը:



- 3.4.30. Անհրաժեշտ է անպայման պահպանել Internet գործառնությունը վերաբերվող ամբողջ գրագրությունը, անդորագրերը և այլն:
- 3.4.31. Վստահ լինելու համար, որ քարտի վերաբերյալ տեղեկատվությունը հաղորդվում է գաղտնագրված, անհրաժեշտ է համոզվել, որ առևտրի կետի համապատասխան էջի հասցեն (URL) սկսվում է <https://> դասիչով: Միաժամանակ, էջադիտիչի եզրին պետք է հայտնվի փակ կողպեքի տեսքով նկար:
- 3.4.32. Անհրաժեշտ է զգուշանալ էլեկտրոնային փոստով ստացվող այն հաղորդագրություններից, որոնք պարունակում են կցված ֆայլեր կամ անձանոթ Web էջի հասցեներ: Դրանց միջոցով հնարավոր է ստանալ համակարգչային վիրուսներ, այլ վնասարար ծրագրեր, վնասման կամ բացահայտման վտանգի ենթարկել կարևոր կամ գաղտնի տեղեկատվություն:
- 3.4.33. Համակարգչում անհրաժեշտ է տեղադրել ամենաժամանակակից հակավիրուսային և հակահակերային ծրագրեր, ժամանակին թարմացնել դրանց տվյալների շտեմարանները և պարտադիր կերպով իրականացնել համակարգչում առկա այլ ծրագրերի պարբերական թարմացումների տեղադրումը:
- 3.4.34. Էլեկտրոնային փոստով չպետք է պատասխանել այնպիսի հարցումների, որոնք վերաբերվում են Քարտապանի անձնական տվյալներին: Եթե հեռախոսով կամ կապի այլ միջոցներով պահանջում են հայտնել բանկային գաղտնաբառը (չՉփոթե՞լ PIN-ի հետ), անձնագրի համարը կամ այլ նմանատիպ տեղեկատվություն, ապա անհրաժեշտ է պատասխանել միայն հարցման օրինականության մեջ լիակատար վստահություն ձեռք բերելուց հետո:
- 3.4.35. Անհրաժեշտ է զգուշանալ կեղծ, սակայն օրինական ընկերությունների Web էջերին կամ էլեկտրոնային փոստին նմանվող այնպիսի հասցեներից, որոնք իրականում կարող են առաջնորդել խաբեական հասցեով:
- 3.4.36. Web էջը ճիշտ փակելու համար հաճախ բավարար չէ միայն փակել էջադիտիչի պատուհանը, այլ պետք է հետևել տվյալ էջը թողնելու համապատասխան հրահանգներին, այլապես մեկ այլ անձ կարող է Քարտապանից հետո այնտեղ մուտք գործելու հնարավորություն ունենալ:
- 3.4.37. Անհրաժեշտ է խուսափել Internet ծառայություններ մատուցող ընդհանուր օգտագործման կետերում (Internet-սրճարաններ և այլն) ֆինանսական գործառնություններ կատարելուց: Դրանց մեջ կարող են տեղադրված լինել հատուկ ծրագրեր, որոնք կարող են գրանցել Քարտապանի բոլոր գործողությունները և բացահայտել այն տվյալները, որոնք կհավաքվեն համակարգչի ստեղնաշարի միջոցով:
- 3.4.38. Ինտերնետային առևտրի կետերում քարտային գործառնությունների անվտանգության բարձրացման նպատակով գործում են MasterCard® SecureCode™ և Verified by Visa® (VbV) համակարգերը, որոնք ապահովում են նշված համակարգերին անդամակցած առևտրի կետերում MasterCard և Visa քարտերով կատարվող գործառնությունների անվտանգության ժամանակակից մակարդակ՝ հիմնված SMS հաղորդագրությունների միջոցով Քարտապանին ուղարկվող մեկանգամյա գաղտնաբառերի վրա: Նշված համակարգերին անդամակցած առևտրի կետերում յուրաքանչյուր գործառնության դեպքում Քարտապանի պահանջով նրա բջջային հեռախոսին կուղարկվի մեկանգամյա գաղտնաբառ, որն անհրաժեշտ է անմիջապես մուտքագրել գործառնության հաստատման հատուկ դաշտում, այլապես գործառնությունը կմերժվի: Ընդ որում, քարտապանը գաղտնաբառը չպետք է հայտնի այլ անձանց, իսկ բջջային հեռախոսահամարի բացակայության կամ դրա փոփոխության դեպքում պետք է անձամբ, իսկ բացառիկ դեպքերում, Բանկի համաձայնությամբ, նաև կապի այլ միջոցներով Բանկ ներկայացված գրավոր դիմումի հիման վրա այդ մասին տեղեկացնի Բանկին:

**3.5. Բանկի պարտականությունները և իրավունքները**

- 3.5.1. Բանկը պարտավորվում է
  - 3.5.1.1. Քարտապանին նոր թողարկված կամ վերաթողարկված վճարային քարտը տրամադրել հաճախորդին սույն կանոնների 2.1 կետում նախատեսված կարգով և ժամկետներում:
  - 3.5.1.2. Ապահովել Քարտի սպասարկումը՝ համաձայն Visa International, MasterCard, ArCa վճարահաշվարկային համակարգերի կողմից ընդունված կանոնների
  - 3.5.1.3. Մինչև հաջորդ ամսվա 15-ը Քարտապանին տրամադրել Քարտային հաշվի քաղվածք՝ Քարտապանի նշած հաղորդակցման եղանակով:
  - 3.5.1.4. Կանխիկ կամ անկանխիկ եղանակով իրականացնել գումարների մուտքագրումը Քարտային հաշվին՝ ոչ ուշ, քան համապատասխան հանձնարարականի (այդ թվում՝ նաև վճարահաշվարկային կազմակերպություններից և պրոցեսինգային ընկերությունից ստացված վճարահաշվարկային փաստաթղթերի) և համապատասխան գումարի Բանկ մուտքագրելու օրվան հաջորդող բանկային օրը:
  - 3.5.1.5. Կանխիկ կամ անկանխիկ եղանակով իրականացնել գումարների ելքագրումը Քարտային հաշվից՝ ոչ ուշ, քան համապատասխան հանձնարարականի (այդ թվում՝ նաև վճարահաշվարկային կազմակերպություններից և պրոցեսինգային ընկերությունից ստացված վճարահաշվարկային փաստաթղթերի) Բանկ մուտքագրելու օրվան հաջորդող բանկային օրը:

- 3.5.1.6. Քարտի կորստի կամ հափշտակման վերաբերյալ Քարտապանից ահազանգ ստանալուն պես՝ կատարել Քարտի գործողության կասեցում՝ բլոկավորում:
- 3.5.1.7. ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով սահմանված կարգով պահպանել քարտապանի վերաբերյալ իրեն հայտնի դարձած բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:
- 3.5.2. Բանկն իրավունք ունի՝
  - 3.5.2.1. Մերժել Քարտով գործարքների իրականացումը, եթե պահանջվող գումարը գերազանցում է Քարտապանի Քարտային հաշվին այդ պահին եղած Վճարային սահմանաչափը կամ Քարտապանի կողմից չեն իրականացվել Պայմանագրով սահմանված վճարները
  - 3.5.2.2. Իրավասու պետական մարմինների կողմից ստացված համապատասխան որոշումների հիման վրա կասեցնել Վճարային քարտով և կից քարտերով գործառնությունների իրականացումը:
  - 3.5.2.3. Հատուկ (արտոնյալ) սակագներով Վճարային քարտերի տրամադրման (այդ թվում՝ աշխատավարձային նախագծերի և այլ արտոնյալ սակագների կիրառում նախատեսող Բանկի հետ համագործակցության առկայության) դեպքում, արտոնությունների տրամադրման նախապայմանի դադարեցման պահից վճարային քարտի տրամադրման և սպասարկման սակագները համապատասխանեցնել տվյալ պահին Բանկում գործող սակագներին կամ այլ արտոնյալ սակագների (բավարար հիմքերի առկայության դեպքում):
  - 3.5.2.4. Քարտից հրաժարվելու դեպքում Քարտապանին չվերադարձնել Քարտի սպասարկման վարձը:
  - 3.5.2.5. Քարտապանին պատկանող ցանկացած այլ հաշիվների մնացորդների հաշվին մարել նրա դեբիտորական պարտքերը և/կամ Քարտի տարեկան սպասարկման վարձի պարտքերը:
- 3.6. **Քարտապանի պարտականությունները և իրավունքները**
  - 3.6.1. Քարտապանը պարտավորվում է՝
    - 3.6.1.1. Իր և իր ներկայացուցչի վերաբերյալ տրամադրել Բանկին հավաստի տեղեկություն:
    - 3.6.1.2. Վճարել Բանկին Քարտի և կից քարտերի և քարտային հաշվի սպասարկման հետ կապված բոլոր վճարները և տույժերը, որոնք բխում են Պայմանագրից:
    - 3.6.1.3. Քարտի գործողության դադարեցման դեպքում այն 5 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել Բանկին: Քարտային հաշվի փակման դիմում ներկայացնելու դեպքում քարտը չվերադարձնելիս Քարտապանը կրում է տվյալ քարտի կիրառմամբ կատարված զեղծարարական գործառնությունների ողջ ռիսկը, ինչպես նաև պարտավոր է փոխհատուցել քարտը միջազգային STOP LIST մուտքագրելու համար Բանկի սակագներով և դրույքաչափերով սահմանված միջնորդավճարները:
    - 3.6.1.4. Քարտի կամ կից քարտերի կորստի և/կամ PIN-կոդի՝ այլ անձանց հասանելի դառնալու կասկած ունենալու դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել Բանկին կամ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ին՝ քարտի բլոկավորման համար:
    - 3.6.1.5. Գործարքների իրականացման ժամանակ սպասարկող աշխատակցի պահանջով ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ:
    - 3.6.1.6. Երրորդ անձանց չփոխանցել քարտը կամ կից քարտերը և PIN-կոդը:
    - 3.6.1.7. Հինգ օրացուցային օրվա ընթացքում Բանկին տեղեկացնել անձը հաստատող փաստաթղթի, հեռախոսահամարի, աշխատանքի, բնակության վայրի և նախկինում տրամադրված այլ տեղեկությունների փոփոխությունների մասին:
  - 3.6.2. Քարտապանն իրավունք ունի՝
    - 3.6.2.1. Քարտի կիրառմամբ իր Քարտային հաշվի Վճարային սահմանաչափի սահմաններում ստանալ կանխիկ միջոցներ բանկոմատներից և կանխիկի տրամադրման կետերից կամ կատարել անկանխիկ վճարումներ:
    - 3.6.2.2. Դիմել բանկին կից քարտեր ստանալու համար, կից քարտերը կասեցնելու համար՝ գրավոր տեղեկացնելու դրանց փակման մասին և վերադարձնելով դրանք Բանկին:
    - 3.6.2.3. պատվիրել և ստանալ նոր Քարտ/կից քարտեր՝ ժամկետները լրացած, վնասված քարտերի փոխարեն:
    - 3.6.2.4. Իր քարտային հաշվին գումարներ մուտքագրել ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:
    - 3.6.2.5. Բանկից պահանջել ակտիվացնել քարտով կատարված յուրաքանչյուր գործառնության վերաբերյալ կարճ հաղորդագրության (SMS) ստացման ծառայություն: Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի քարտով կատարված այն զեղծարարական գործառնությունների համար, որոնք կատարվել են քարտով զեղծարարական թեկուզև մեկ գործառնության վերաբերյալ SMS տեղեկատվության ստացումից հետո Քարտապանի կողմից Բանկին անմիջապես չտեղեկացման և քարտի չարգելափակման արդյունքում:
    - 3.6.2.6. Դիմել բանկին՝
      - ա/ Քարտի բլոկավորման և ապաբլոկավորման, ինչպես նաև Վճարային սահմանաչափերի փոփոխման համար
      - բ/ Անձնական տվյալների փոփոխման համար
      - գ/ Գործարքների բողոքարկումների իրականացման համար
      - դ/ Բանկի սակագներով և պայմաններով սահմանված ծառայություններին բաժանորդագրման համար

**3.7. Բանկի և Քարտապանի պատասխանատվությունը.**

- 3.7.1. Քարտապանը պատասխանատվություն է կրում Պայմանագրով նախատեսված իր պարտականությունների չկատարման և (կամ) ոչ պատշաճ կատարման համար:
- 3.7.2. Բանկը պատասխանատվություն է կրում քարտապանի, վճարային քարտի և գործարքների հետ կապված ամբողջ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար՝ համաձայն ՀՀ օրենսդրության և Պայմանագրի:
- 3.7.3. Բանկը պատասխանատվություն է կրում կորցրած Քարտի ոչ օրինական օգտագործմամբ քարտապանին պատճառված վնասների համար միայն կորստի վերաբերյալ ծանուցում ստանալու և միայն դրանից հետո իր կողմից հավաստագրված գործարքների համար:
- 3.7.4. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում քարտապանի առջև երրորդ անձանց կողմից կեղծված կամ զեղծարարությամբ քարտապանին պատճառված վնասների համար և քարտապանին այդ եղանակով պատճառած վնասները Բանկի կողմից չեն հատուցվում:

**3.8. Քարտի բլոկավորման և ապաբլոկավորման կարգը, պայմաններն ու ժամկետները**

- 3.8.1. Քարտերը բլոկավորվում են ինչպես հաճախորդի ցանկությամբ, այնպես էլ Բանկի կողմից: Հաճախորդի կողմից քարտը բլոկավորվում է քարտի կորստի, գողանալու և քարտով կատարված այն գործարքները հայտնաբերելուց հետո, որը չի կատարվել քարտատիրոջ կողմից: Բանկի կողմից քարտը կարող է բլոկավորել այն դեպքում, երբ քարտով կատարվել են կասկածելի գործարքներ և չի հաջողվում կապ հաստատել քարտապանի հետ: Այն դեպքում, երբ քարտով, համաձայն վճարահաշվարկային կազմակերպությունների կանոնների կատարվում են ստորին սահմանաչափերով գործարքներ և հնարավորություն չի լինում կապ հաստատել հաճախորդի հետ Բանկի աշխատակիցները ստանում են իրավասություն նշված քարտերը միջազգային STOP LIST մուտքագրելու և Բանկի սակագներով և դրույքաչափերով սահմանված միջնորդավճարները հաճախորդի տվյալ քարտի հաշվից կամ այլ հաշիվներից գանձելու համար:
- 3.8.2. Եթե վճարային քարտին առկա է չվճարված երեք ամիս և ավելի տևողությամբ տարեկան սպասարկման վարձ/և/կամ դեբիտորական պարտք, Բանկն իրավասու է առանց հաճախորդին տեղեկացնելու փակել քարտը /բլոկավորել/, որից հետո այն կարող է վերաբացվել /ապաբլոկավորում/ միայն վերոնշյալ պարտքերը մարվելուց հետո:
- 3.8.3. Քարտատիրոջ նախաձեռնությամբ քարտի ապաբլոկավորումը կատարվում է միայն Բանկի կողմից և նրա համաձայնությամբ: Քարտն ապաբլոկավորվում է քարտատիրոջ կողմից Բանկում կազմված կամ անձամբ, իսկ բացառիկ դեպքերում, Բանկի համաձայնությամբ, նաև կապի այլ միջոցներով Բանկ ներկայացված գրավոր դիմումի հիման վրա: Բանկը կարող է մերժել քարտի ապաբլոկավորումը, եթե քարտի բլոկավորումն արդյունք է օրենքով սահմանված կարգով քարտի կամ քարտային հաշվի վրա դրված սահմանափակումների, մուծված չէ քարտի ապաբլոկավորման համար սահմանված վարձավճարը կամ քարտի ապաբլոկավորումը կարող է հանգեցնել ֆինանսական կորուստների, որոնք չեն կարող ծածկվել տվյալ քարտային հաշվին առկա միջոցներով:

**3.9. Քարտապանի կողմից քարտային գործառնության բողոքարկման կարգն ու ժամկետները:**

- 3.9.1. Քարտապանը կարող է դիմում-պահանջ ներկայացնել Բանկին իր կողմից չկատարված կամ անհաջող կատարված գործարքների համար: Այն դեպքում, երբ Քարտապանի հաշվով կատարվել են գործարքներ (բանկոմատից, POS տերմինալից կանխիկացում, անկանխիկ վճարում) և հաշվից գումարը ելքագրվել է, սակայն ծառայությունը կամ գումարը փաստացի չի տրամադրվել Քարտապանին, ապա վերջինս քաղվածքը ստանալու օրվանից 45 օրվա ընթացքում Բանկին պետք է ներկայացնի համապատասխան դիմում-պահանջ, իսկ եթե գործարքները բողոքարկվում են Քարտապանի կողմից քաղվածքը ստանալու պահից 55 օրվա ընթացքում, նաև դիմում-պահանջին կից սահմանված ժամկետում դիմում-պահանջը ներկայացնելու անհնարինությունը հավաստող փաստաթղթեր: Բանկը, դիմում-պահանջը ներկայացնելուց հետո 90 օրվա ընթացքում հատուցում է Քարտապանի հաշվից դեբետագրված միջոցները կամ մերժում է ներկայացված դիմում-պահանջում նշված գումարը հատուցելու պահանջը, եթե Քարտապանի կողմից խախտվել են դիմում-պահանջի ներկայացման ժամկետները, կամ վճարային քարտով գործառնությունների իրականացման հիմնական կանոններով կամ Պայմանագրով սահմանված դրույթները, որոնց հետևանքով են ի հայտ եկել Քարտապանի կողմից չվավերացված գործարքները, կամ Բանկն ունի հիմնավոր փաստեր, որոնք հիմք են հանդիսանում բողոքարկված գործարքները որպես Քարտապանի կողմից կատարված զեղծարարություն/խարդախություն բնութագրելու համար:

**3.10. Քարտի վերաթողարկման կարգն ու պայմանները, ժամկետները**

- 3.10.1. Քարտի գործողության ժամկետի ավարտից 5 օր առաջ Բանկն առանց քարտապանի լրացուցիչ դիմումի վերաթողարկում է քարտը, բացառությամբ եթե.
- 3.10.2. Քարտապանի հետ Բանկի աշխատակիցները չեն կարողացել կապ հաստատել
- 3.10.3. Քարտապանը հրաժարվել է քարտը վերաթողարկելու Բանկի առաջարկից,

- 3.10.4. Քարտապանը մինչ այդ (քարտի գործողության ժամկետի ավարտից նվազագույնը 30 օր առաջ) դիմել է Բանկին հաշիվը փակելու (քարտը չվերաթողարկելու) համար,
- 3.10.5. Հաշվով քարտի գործողության ժամկետի ավարտման ամսին նախորդող 365 օրվա ընթացքում ոչ մի գործարք չի իրականացվել և հաշվի մնացորդը 50.000 ՀՀ դրամից կամ համարժեք արտարժույթից պակաս է,
- 3.10.6. Քարտապանը նշված քարտի կամ Բանկում գործող այլ քարտերի մասով Բանկի նկատմամբ ունի չկատարված ժամկետանց պարտավորություններ:

#### **4. Այլ բանկային ծառայությունների մատուցում**

##### **4.1. AEBINFO համակարգ**

**4.1.1.** հաճախորդները (ֆիզիկական և իրավաբանական անձիք) կարող են տեղեկանալ իրենց հաշիվների վրա եղած միջոցների և դրանց շարժի մասին առանց Բանկ այցելելու, օրվա ցանկացած ժամի և շաբաթվա ցանկացած օր, անկախ Բանկի աշխատանքային ժամերից:

##### **4.1.2. AEBINFO համակարգի միջոցով Բանկի հաճախորդը հնարավորություն ունի.**

**ա/** Դիտել բանկային հաշիվների ընթացիկ մնացորդները, այդ թվում՝ ընթացիկ, վարկային, ավանդային և քարտային հաշիվների,

**բ/** Դիտել վարկային, ավանդային պայմանագրերի գլխավոր տեղեկությունները և ընթացիկ վիճակը, մարված/վճարված տոկոսները, կուտակումները,

**գ/** Դիտել կոմունալ վճարումների ավտոմատ գանձման պայմանագրի գլխավոր տեղեկությունները և տվյալ ամսում կատարված վճարումների քաղվածքը,

**դ/** Դիտել նշված ժամանակահատվածում կատարված գործարքները (մեկ ամսվա կտրվածքով), տպել քաղվածքներ:

##### **4.1.3. AEBINFO համակարգի տեխնիկական պահանջներն են.**

**ա/** Հաճախորդի կողմ,

**բ/** 10 նիշանոց գաղտնաբառ:

##### **4.1.4. Ինչպե՞ս դառնալ AEBINFO համակարգի օգտագործող.**

**ա/** ստանալ Հաճախորդի կողմ,

**բ/** Բանկին տրամադրել 10 նիշանոց գաղտնաբառ՝ հաճախորդի քարտում գրանցելու համար,

**գ/** Եթե հաճախորդը նախապես Բանկին չի տրամադրել 10 նիշանոց գաղտնաբառ, պետք է այցելի Բանկի համապատասխան մասնաճյուղ և լրացնի դիմում (պլաստիկ քարտատերերը կարող են դիմումը լրացնել ցանկացած մասնաճյուղում):

##### **4.2. "AEB HomeBank" համակարգ**

**4.2.1. "AEB HomeBank" համակարգով** հաճախորդներին առաջարկում է ինտերնետի միջոցով գործարքներ կատարելու հնարավորություն: Հաճախորդները կարող են օգտվել բանկային ծառայություններից առանց բանկ այցելելու:

##### **4.2.2. AEB HomeBank համակարգի բաժիններն են.**

Վճարումներ ՀՀ տարածքում,

Վճարումներ ՀՀ տարածքում խմբային,

Վճարումներ ՀՀ տարածքից դուրս,

Արտարժույթի փոխարկման հայտեր,

Կանխիկացման հայտեր,

Վարկեր,

Ավանդներ,

Նամակներ բանկին,

Քաղվածքներ բանկից՝ առանձին փաստաթղթերը տպելու հնարավորությամբ:

##### **4.2.3. AEB HomeBank համակարգի տեխնիկական պահանջներն են.**

eToken PASS տիպի սարք,

Բանկում՝ Հաճախորդի քարտի գրանցված հեռախոսի տեղեկատվական կոդ (10 նիշանոց):

##### **4.2.4. Ինչու է AEB HomeBank համակարգը նախընտրելի.**

Գործում է օրը՝ 24 ժամ, շաբաթը՝ 7 օր,

Ազատում է հաճախորդին անձամբ բանկ այցելելու անհրաժեշտությունից,

Ազատում է հաճախորդին բանկային հերթերում ժամանակ վատնելուց:

**4.2.5. հաճախորդին տրամադրում է անհատույց օգտագործման համար ունիկալ սարք՝ "AEB HomeBank" համակարգ միանգամյա գաղտնաբառերի ավտոնոմ գեներատոր՝ eToken PASS տիպի սարք, որի անվտանգությունն ապահովում է, ներկայումս ինտերնետով կատարվող գաղտնագրված փոխանցումների ամենաապահով՝ x.509 սերտիֆիկատների միջոցով:**

4.2.6. **Հաճախորդի ցանկությամբ կարող է տրվել մեկից ավելի սարքեր,**

4.2.7. **"AEB HomeBank" համակարգով աշխատելու ուղեցույցին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի կայքից:**

### **4.3. Cash2card.**

#### **4.3.1. Այս ծառայության առավելություններն են**

Անվճար քարտի տրամադրում(Cirus Maestro կամ ArCa Classic),

գումարի ստացում՝ առանց Բանկ այցելելու,

ստացված գումարի անհապաղ մուտքագրում քարտին, միայն մեկ հեռախոսագանգի կամ կարճ հաղորդագրության միջոցով\*,

բանկի կողմից սահմանված արտոնյալ փոխարժեք,

սպասարկման կետերի և բանկոմատների լայն ցանցի շնորհիվ, գումարի հարմար, արագ և շուրջօրյա կանխիկացման հնարավորություն,

վարկային գծի տրամադրման հնարավորություն,

բանկի բոլոր տեսակի քարտերին ծառայության ակտիվացման հնարավորություն:

#### **4.3.2. Այս ծառայությունից օգտվող հաճախորդը քարտին գումար մուտքագրելու համար կատարում է հետևյալ գործողությունը**

Ուղարկում է կարճ հաղորդագրություն պայմանագրում նշված իր հեռախոսահամարից (099)158686 հեռախոսահամարին՝ նշելով.

փոխանցողի անունը, ազգանունը,

փոխանցողի տրամադրած վերահսկիչ կոդը

կամ, զանգահարի (010) 510 991 հեռախոսահամարին նշելով՝

փոխանցողի և ստացողի անունը, ազգանունը,

իր բանկային տեղեկատվական կոդը,

փոխանցողի տրամադրած վերահսկիչ կոդը,

պայմանագրում նշված իր հեռախոսահամարը,

հաճախորդի նույնականացման համար անհրաժեշտ այլ տվյալներ:

## **5. Եզրափակիչ դրույթներ.**

### **5.1. Պայմաններին կցվում են հետևյալ հավելվածները.**

Հավելված 1. Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթեր.

Հավելված 2. Բանկին անձնական և այլ տվյալներ տրամադրելու համաձայնություն (<<հավելված 2.1 ՖՍ ձև>> և <<Հավելված 2.2.ԻՍ ձև>>).

Հավելված 3. Ստորագրության և կնիքի նմուշի քարտ.

### **5.2. Պայմանների հավելվածները հանդիսանում են Պայմանների անբաժանելի մասերը:**

**<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ում բանկային և/կամ այլ հաշիվների բացման և սպասարկման,  
վճարային քարտերի թողարկման և սպասարկման,  
այլ բանկային ծառայությունների մատուցման  
Պայմանների Հավելված թիվ 1**

**Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթեր**

**Իրավաբանական անձանց բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ փաստաթղթերն են  
Իրավաբանական անձանց հիմնական հաշվի բացում**

Իրավաբանական անձի անունով հիմնական բանկային հաշիվ բացելու համար Բանկ են ներկայանում տնօրենը (ղեկավարը), գլխավոր հաշվապահը (առկայության դեպքում), ինչպես նաև ստորագրության իրավունքով օժտված անձինք՝ իրենց հետ ունենալով ձեռնարկության կլոր կնիքը և հետևյալ փաստաթղթերը.

1. Անձը հաստատող փաստաթուղթը,
2. Իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը (բնօրինակ և 1 պատճեն),
3. Կանոնադրությունը (բնօրինակ և 1 պատճեն՝ կարված և կնքված «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ),
4. Հարկային կողը (բնօրինակ և 1 պատճեն),
5. Տնօրենի (ղեկավարի), գլխավոր հաշվապահի (առկայության դեպքում), ինչպես նաև ստորագրության իրավունքով օժտված այլ անձանց պաշտոնի ստանձման հրամաններից քաղվածքները կամ հաստատված պատճենները, տնօրենի դեպքում նաև իրավասու մարմնի կողմից նշանակման որոշման /արձանագրության/ պատճենը: Հրամանի պատճենները չեն պահանջվում, եթե նշված անձինք գրանցված են ներկայացվող պետական գրանցման վկայականում: Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց դեպքում՝ տնօրենի (ղեկավարի), գլխավոր հաշվապահի (առկայության դեպքում), ինչպես նաև ստորագրության իրավունքով օժտված այլ անձանց պաշտոնի ստանձնումը հավաստող համապատասխան փաստաթուղթ,
6. Լուծարվող (անվճարունակության գործընթացում գտնվող) իրավաբանական անձի հաշիվ բացելու դեպքում լուծարային (անվճարունակության գործով) կառավարիչը ներկայացնում է լուծարման (անվճարունակության) վերաբերյալ համապատասխան իրավասու մարմնի որոշումը:

**Իրավաբանական անձանց ժամանակավոր հաշվի բացում**

Իրավաբանական անձի անունով ժամանակավոր հաշիվ բացելու համար Բանկ է ներկայանում հիմնադիր պայմանագրում նշված հիմնադիրներից առնվազն մեկը կամ նրանց ներկայացուցիչը՝ իր հետ ունենալով հետևյալ փաստաթղթերը.

1. Անձը հաստատող փաստաթուղթը,
2. Իրավաբանական անձի հիմնադիր պայմանագիրը /բնօրինակ և 1 պատճեն/:

**Անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացվող փաստաթղթերը**

Անհատ ձեռնարկատերը հաշիվ բացելու համար Բանկ է ներկայանում՝ իր հետ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1. Անձը հաստատող փաստաթուղթ,
2. Սոցիալական քարտ (ՀՀ քաղաքացիների համար),
3. Անհատ ձեռնարկատիրոջ վկայականը /բնօրինակը և պատճենը/ և կնիքը /առկայության դեպքում/ (պահանջվում է միայն անհատ ձեռնարկատիրոջից),
4. Հարկային կող (բնօրինակ և 1 պատճեն) (պահանջվում է միայն անհատ ձեռնարկատիրոջից),
5. Լուծարվող (անվճարունակության գործընթացում գտնվող) անհատ ձեռնարկատիրոջ հաշիվ բացելու դեպքում Բանկ ներկայացող լուծարային (անվճարունակության գործով) կառավարիչը ներկայացնում է նաև լուծարման և իր նշանակման վերաբերյալ համապատասխան իրավասու մարմնի որոշումը,
6. Հաշվի (հաշիվների) միջոցները տնօրինելու լիազորված անձի դեպքում լիազորագիր՝ վավերացված նոտարի կողմից:

### **Ֆիզիկական անձը հաշիվ բացելու համար պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը**

1. Անձը հաստատող փաստաթուղթ,
2. Սոցիալական քարտ (ՀՀ քաղաքացիների համար),
3. Հաշվի (հաշիվների) միջոցները տնօրինելու լիազորված անձի դեպքում լիազորագիր՝ վավերացված նոտարի կողմից:

Փաստաթղթերի պատճենները Բանկին պետք է ներկայացվեն դրանց վրա <<խսկականի հետ ճիշտ է>> նշումով Հաճախորդի կողմից հավաստող ստորագրությամբ:

Բանկի պահանջով Հաճախորդը պարտավոր է ներկայացնել նաև գործարքը(ները) կատարելու կամ գործարար հարաբերությունը(ները) հաստատելու համար հիմնավորող փաստաթղթեր՝ պայմանագրեր, հաշիվ-ապրանքագրեր և այլն (բնօրինակը կամ նոտարի կողմից վավերացված պատճեն), ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսվող այլ տեղեկությունները:

**<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ում բանկային և/կամ այլ հաշիվների բացման և սպասարկման, վճարային քարտերի թողարկման և սպասարկման, այլ բանկային ծառայությունների մատուցման Պայմանների Հավելված թիվ 2.1 ՖՍ ձև**

**Բանկին անձնական և այլ տվյալներ տրամադրելու Համաձայնություն**

1.	<b>Հաճախորդի անձնական տվյալներ.</b>	
1.1.	Անուն, ազգանուն, հայրանուն (հայերեն)	
1.2.	Անուն, ազգանուն, հայրանուն (անգլերեն)	
1.3.	Ծննդյան ամսաթիվ	
1.4.	Ծննդավայր (երկիր, քաղաք)	
1.5.	Սեռ	
1.6.	ընտանեկան դրությունը	
1.7.	Հաշվառման հասցե	
1.8.	Բնակության հասցե	
1.9.	Քաղաքացիության երկիր	
1.10.	Ռեզիդենտության երկիր	
1.11.	Անձ հաստատող փաստաթղթի տվյալներ	
1.12.	ՀԾՀ/ՀԾՀ հրաժարվելու տեղեկանքի համար	
1.13.	ԱՁ հաճախորդի գրանցման համար	
1.14.	ԱՁ հաճախորդի գրանցման ամսաթիվ	
1.15.	ԱՁ հաճախորդի ՀՎՀՀ	
1.16.	Բնակության հեռախոսահամար	



1.17.	Բջջային հեռախոսահամար			
1.18.	Էլեկտրոնային փոստի հասցե			
1.19.	Այլ տվյալներ			
1.20.	Ստորագրության նմուշ			
<b>2.</b>	<b>Հաճախորդի զբաղվածություն.</b>			
<b>2.1.</b>	Վարձու աշխատող <input type="checkbox"/> անձն. բիզնես <input type="checkbox"/> կենսաթոշակառու <input type="checkbox"/> գործազուրկ <input type="checkbox"/>			
<b>2.2.</b>	Աշխատավայրի անվանում			
<b>2.3.</b>	Աշխատավայրի հասցե			
<b>2.4.</b>	Աշխատավայրի հեռախոսահամար			
<b>2.5.</b>	պաշտոնը			
<b>3.</b>	<b>Հաճախորդի Բանկի հետ կապված անձ համարվելու մասին տեղեկություններ.</b>			
<b>3.1.</b>	Հանդիսանում եմ կապված անձ <input type="checkbox"/>		չեմ հանդիսանում կապված անձ <input type="checkbox"/>	
	Հիմքերը			
<b>4.</b>	<b>Հաճախորդի հետ փոխկապակցված (&lt;&lt;Բանկերի և Բանկային գործունեության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի իմաստով) Բանկի այլ հաճախորդներ (ավանդատու, վարկառու հաշվետեր)</b>			
<b>4.1</b>	ՖԱ Անուն ազգանուն հայրանուն	Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ	Բնակության հասցե	Բանկի տարածքային ստորաբաժանման անվանումը
<b>4.2.</b>	ԻԱ անվանում	Գրանցման համար ՀՎՀՀ	Գրանցման հասցե	Բանկի տարածքային ստորաբաժանման անվանումը
<b>5.</b>	<b>Օրենքով սահմանվող պարտադիր տեղեկությունները Բանկի կողմից տրամադրելու եղանակը</b> (Հաճախորդի կողմից որևէ եղանակ չնշվելու դեպքում տեղեկությունները տրամադրվում են 7-րդ կետում նշված փոստային հասցեով)			
<b>5.1.</b>	Բանկի տարածքում առձեռն(նշել հասցեն) <input type="checkbox"/>			
<b>5.2.</b>	Էլեկտրոնային փոստով(նշել հասցեն) <input type="checkbox"/>			

5.3.	Այլ <input type="checkbox"/>		
5.4.	Հաշվի քաղվածքի տրամադրման լեզուն	Հայերեն <input type="checkbox"/>	անգլերեն <input type="checkbox"/>
5.5.	<b>Բանավոր հեռախոսակապով տեղեկատվության տրամադրման ծածկագիր (.....նիշանոց թիվ)՝</b> <input type="text"/>		
5.7.	SMS-ով գործարքների մասի տեղեկացում <input type="checkbox"/>	հեռախոսահամար	գործարքի գումարի չափը
			սկսած՝
6.	<b>Բանկում Հաճախորդի անունից գործող Ներկայացուցչի տվյալները</b>		
6.1.	Անուն, ազգանուն, հայրանուն (հայերեն)		
6.2.	Անձ հաստատող փաստաթղթի տվյալներ		
6.3.	ՀՕՀ/ՀՕՀ հրաժարվելու տեղեկանքի համար		
6.4.	Հաշվառման հասցե		
6.5.	<b>Հաճախորդը Ներկայացուցչին լիազորում է Բանկում կատարելու հաճախորդի անունից՝</b>		
	6.5.1. <input type="checkbox"/> ցանկացած գործարքներ, այդ թվում՝ կնքել հաշվի բացման/ փակման պայմանագրեր, տնօրինել բացված և հետագայում բացվող հաշիվները, կատարել գումարի ելքեր և փոխանցումներ, տալ այլ հանձնարարականներ ստանալ վճարային քարտեր, ստանալ վճարային քարտերի Pin կոդը՝ փակ ծրարով, տալ/ստանալ դիմումներ, քաղվածքներ և այլ փաստաթղթեր, գրավ դնել գումարներ, կնքել գրավի պայմանագրեր ու այլ համաձայնագրեր (սույն կետը ընտրելու դեպքում՝ Հաճախորդը վանդակում դնում է V և ստորագրում այս դաշտում)		
	<b>Ստորագրություն</b>		
6.5.2.	<input type="checkbox"/> միայն հետևյալ գործարքները (սույն կետը ընտրելու դեպքում՝ Հաճախորդը վանդակում դնում է V, նշում կոնկրետ լիազորությունները և ստորագրում այս դաշտում)՝		
	<b>Ստորագրություն</b>		
6.6.	Ներկայացուցչի Լիազորությունների ժամկետը	Սկիզբ/օր,ամիս,տարեթիվ/	ավարտ /օր,ամիս,տարեթիվ/
7.	<b>Հաճախորդի ծանուցման եղանակները (Հաճախորդի ստորև նշված որևէ եղանակով Բանկի կողմից կատարված ծանուցումը համարվում է Հաճախորդին պատշաճ հանձնված՝ փոստի հասցեով ծանուցում ուղարկվելու դեպքում ուղարկվելու օրվան հաջորդող 7-րդ օրվանից, իսկ մյուս եղանակների դեպքում՝ ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից: Որևէ եղանակի փոփոխության մասին Բանկին գրավոր տեղեկացումից հետո փոփոխված եղանակով կատարված ծանուցումն է համարվում Հաճախորդին պատշաճ հանձնված:</b>		
	Փոստով <input type="checkbox"/>	Հասցեն՝	
	Էլեկտրոնային փոստով <input type="checkbox"/>	Հասցեն՝	
	Էս-Էմ-Էս(SMS)-ով <input type="checkbox"/>	Հեռախոսահամար՝	
8	Մույնով Հաճախորդը Բանկի ծառայություններից օգտվելու համար տրամադրում է իր վերոգրյալ տվյալները և ստորագրությամբ հաստատում է, որ տրամադրված բոլոր տվյալները ճիշտ են ու արժանահավատ, միաժամանակ Հաճախորդը պարտավորվում է վերոգրյալ որևէ տվյալի փոփոխության դեպքում՝ դրա մասին երեք բանկային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Բանկին:		

.....  
Հաճախորդի ստորագրություն, օր, ամիս, տարեթիվ

.....  
Հաճախորդի կողմից Համաձայնության տրամադրումը Հաստատողի պաշտոն անուն ազգանուն ստորագրություն

**<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ում բանկային և/կամ այլ հաշիվների բացման և սպասարկման, վճարային քարտերի թողարկման և սպասարկման, այլ բանկային ծառայությունների մատուցման Պայմանների Հավելված թիվ 2.2 ԻԱ ձև**

**Բանկին անձնական և այլ տվյալներ տրամադրելու Համաձայնություն**

1.	<b>Հաճախորդի անձնական տվյալներ.</b>	
1.1	անվանում և կազմակերպաիրավական տեսակը	
1.2.	անվանում և կազմակերպաիրավական տեսակը (անգլերեն)	
1.3.	գրանցման համար	
1.4.	գրանցման ամսաթիվ	
1.5.	ՀՎՀՀ	
1.6.	գրանցման հասցե	
1.7.	Ռեզիդենտության երկիր	
1.8.	Ղեկավարի անուն ազգանուն հայրանուն	
1.9.	Ղեկավարի անուն ազգանուն հայրանուն (անգլերեն)	
1.10.	Ղեկավարի բնակության հասցե	
1.11.	Անձ հաստատող փաստաթղթի տվյալներ	
1.12.	ՀՕՀ/ՀՕՀ հրաժարվելու տեղեկանքի համար	
1.13.	Բնակության հեռախոսահամար	
1.14.	Բջջային հեռախոսահամար	
1.15.	Էլեկտրոնային փոստի հասցե	

1.16.	Այլ տվյալներ			
2.	<b>Առևտրային գործունեության տեսակը.</b>			
2.1.				
3.	<b>Հաճախորդի Բանկի հետ կապված անձ համարվելու մասին տեղեկություններ.</b>			
3.1.	Հանդիսանում եմ կապված անձ <input type="checkbox"/>		չեմ հանդիսանում կապված անձ <input type="checkbox"/>	
	Հիմքերը			
4.	<b>Հաճախորդի հետ փոխկապակցված (&lt;&lt;Բանկերի և Բանկային գործունեության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի իմաստով) Բանկի այլ հաճախորդներ (ավանդատու, վարկառու հաշվետեր)</b>			
4.1	ՖԱ Անուն ազգանուն հայրանուն	Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ	Բնակության հասցե	Բանկի տարածքային ստորաբաժանման անվանումը
4.2.	ԻԱ անվանում	Գրանցման համար ՀՎՀՀ	Գրանցման հասցե	Բանկի տարածքային ստորաբաժանման անվանումը
5.	Հաճախորդի ծանուցման եղանակները (Հաճախորդի ստորև նշված որևէ եղանակով Բանկի կողմից կատարված ծանուցումը համարվում է Հաճախորդին պատշաճ հանձնված՝ փոստի հասցեով ծանուցում ուղարկվելու դեպքում ուղարկվելու օրվան հաջորդող 7-րդ օրվանից, իսկ մյուս եղանակների դեպքում՝ ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից: Որևէ եղանակի փոփոխության մասին Բանկին գրավոր տեղեկացումից հետո փոփոխված եղանակով կատարված ծանուցումն է համարվում Հաճախորդին պատշաճ հանձնված:			
5.1.	Փոստով <input type="checkbox"/>		Հասցեն՝	
5.2.	Էլեկտրոնային փոստով <input type="checkbox"/>		Հասցեն՝	
5.3.	Էս-Էմ-Էս(SMS)-ով <input type="checkbox"/>		Հեռախոսահամար՝	
5.4.	Այլ <input type="checkbox"/>			
5.5.	<b>Բանավոր հեռախոսակապով տեղեկատվության տրամադրման ծածկագիր (10 նիշանոց թիվ)՝</b> <span style="float: right;">□□□□□□□□□□</span>			
5.6.	<b>SMS-ով գործարքների մասի տեղեկացում</b>	հեռախոսահամար	գործարքի գումարի չափը	

	<input type="checkbox"/>		սկսած՝
6.	<b>Բանկում Հաճախորդի անունից գործող Ներկայացուցչի տվյալները</b>		
6.1.	Անուն, ազգանուն, հայրանուն (հայերեն)		
6.2.	Անձ հաստատող փաստաթղթի տվյալներ		
6.3.	ՀԾՀ/ՀԾՀ հրաժարվելու տեղեկանքի համար		
6.4.	Հաշվառման հասցե		
6.5.	<b>Հաճախորդը Ներկայացուցչին լիազորում է Բանկում կատարելու հաճախորդի անունից՝</b>		
	6.5.1. <input type="checkbox"/> ցանկացած գործարքներ, այդ թվում՝ կնքել հաշվի բացման/ փակման պայմանագրեր, տնօրինել բացված և հետագայում բացվող հաշիվները, կատարել գումարի ելքեր և փոխանցումներ, տալ այլ հանձնարարականներ ստանալ վճարային քարտեր, ստանալ վճարային քարտերի Pin կոդը՝ փակ ծրարով, տալ/ստանալ դիմումներ, քաղվածքներ և այլ փաստաթղթեր, գրավ դնել գումարներ, կնքել գրավի պայմանագրեր ու այլ համաձայնագրեր (սույն կետը ընտրելու դեպքում՝ Հաճախորդը վանդակում դնում է V և ստորագրում այս դաշտում)		
	<b>Ստորագրություն</b>		
	6.5.2. <input type="checkbox"/> միայն հետևյալ գործարքները (սույն կետը ընտրելու դեպքում՝ Հաճախորդը վանդակում դնում է V, նշում կոնկրետ լիազորությունները և ստորագրում այս դաշտում)՝		
	<b>Ստորագրություն</b>		
6.6.	Ներկայացուցչի Լիազորությունների ժամկետը	Սկիզբ/օր,ամիս,տարեթիվ/	ավարտ /օր,ամիս,տարեթիվ/
7.	Սույնով Հաճախորդը Բանկի ծառայություններից օգտվելու համար տրամադրում է իր վերոգրյալ տվյալները և ստորագրությամբ հաստատում է, որ տրամադրված բոլոր տվյալները ճիշտ են ու արժանահավատ, միաժամանակ Հաճախորդը պարտավորվում է վերոգրյալ որևէ տվյալի փոփոխության դեպքում՝ դրա մասին երեք բանկային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Բանկին:		

**Օանթություն**՝ ընտրված վանդակում նշվում է V,

.....  
 Հաճախորդի ստորագրություն, օր, ամիս, տարեթիվ

.....  
 Հաճախորդի կողմից Համաձայնության տրամադրումը Հաստատողի պաշտոն անուն ազգանուն ստորագրություն

